

**ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԱՄԵՆԻՑ ՀԱՏ ՀԱՆԴԻՊՈՂ
ԼԵԶՎԱ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են բարոյա-
հոգեբանական այն խնդիրները, որոնք
սովորողին խանգարում են հաղոր-
դակցվել: Առաջարկվում են ուղիներ՝
հաղթահարելու նշված հոգեբանական
արգելքները և խնդիրները: Հոդվածում
կոնկրետ օրինակների հիման վրա վեր
են հանվում լեզվաքերականական որոշ
սխալներ, որոնց սովորողները բախվում
են և որոնք առավել հաճախ են հանդի-
պում: Հոդվածում առանձնակի տեղ է
տրվում լեզվամտածողության զարգաց-
ման խնդրին:

**Հանգուցային բառեր և արտահայ-
տություններ՝** հոգեբանական դժվա-
րություններ, լեզվական խնդիրներ,
լեզվաքերականական սխալներ, լեզ-
վամտածողություն, լեզվական հմտու-
թյուններ, իդիոմատիկ արտահայտու-
թյուններ:

«Որքան լեզու գիտես, այնքան մարդ
ես» –սա մի պարզ ճշմարտություն է, որ
իր մեջ պարունակում է խոր իմաստ: Լե-
զուն հանդիսանում է մարդկային հա-
սարակության համար հաղորդակցման
կարևորագույն միջոց, առանց որի հնա-
րավոր չէ գոյատևել և ոչ էլ պատկերաց-
նել մարդկության զարգացումը: Այսօր
բավարար չէ միայն մայրենի լեզվին տի-
րապետելը: Օտար լեզվի իմացությունն
այսօր համարվում է մեծ առավելություն,
որը տվյալ օտար լեզուն սովորողի առջև
բացում է ոչ միայն շփվելու, այլև գործե-
լու լայն հնարավորություններ: Խոսելով
օտար լեզուների տիրապետելու մասին՝

նշենք, որ առավել մեծ է ներկայումս ան-
գլերենի դերը, քանի որ այն հաղիսանում
է միջազգային լեզու է:

Գաղտնիք չէ, որ սկսած 20-րդ դարի
վերջերից և 21-րդ դարի սկզբներից ան-
գլերենը դարձել է ամենից շատ կիրառ-
վող օտար լեզուն ամբողջ աշխարհում,
որով խոսում են ավելի շատ թվով մար-
դիկ, քան որևէ այլ լեզվով: Անգլերենը
դարձել է այս կամ այն ազգի զարգաց-
ման գլխավոր միջոցը՝ վերացնելով ազ-
գերի միջև մինչ այդ եղած անջրպետը և
աշխարհագրական սահմանները: Մարդ
կարող է շատ լավ և բանիմաց մասնա-
գետ լինել, սակայն առանց օտար լեզվի
իմացության, հատկապես անգլերենի,
նա կարող է դժվարություն ունենալ աշ-
խատանք գտնելու հարցում, անգամ իր
հայրենի երկրում: Շատ դեպքերում էլ
անգլերեն լեզվի իմացությունը դարձել
է որպես լիարժեք մասնագետ կայանա-
լու հիմնական միջոց: Ուսումնասիրու-
թյունները ցույց են տվել, որ ներկայումս
գիտնականներն ավելի շատ են օգտվում
անգլերենով գրականությունից, քան որ-
ևէ այլ լեզվով (մոտ 70 %): Մի շարք
հիմնարկներում, անգամ, Հայաստանի,
պաշտոնական գրագրության մեծ մասն
անգլերենով է, էլ չխոսենք անգլերենով
մեծածավալ այն գիտական և հանրա-
մատչելի նյութերի մասին, որ կարող ենք
գտնել համացանցում (մոտ 90 %):

Այսօր գիտության և տեխնիկայի զար-
գացումը սովորողների համար լայն հնա-
րավորություններ է ստեղծել՝ լեզուներ

ուսումնասիրելու համար, մշակվել են ուսուցման բազմապիսի մեթոդներ, սակայն սույն հոդվածի նպատակն է՝ խոսել այն հոգեբանական դժվարությունների, խնդիրների, լեզվաքերականական ընդհանուր սխալների մասին, որոնց սովորողները բխվում են օտար լեզու սովորելիս, իսկ մեր դեպքում՝ անգլերեն:

Նկատենք, որ շատ հաճախ օտար լեզու սովորելու համար ընտրված հարուստ գրականության ցանկի կամ էլ վերջին խոսքով տեխնիկական միջոցների կիրառման դեպքում էլ սովորողը կարող է ունենալ լեզվական դժվարություններ, ասենք, չկարողանա գոնե նվազագույնս հաղորդակցվել: Իսկ որո՞նք են այդ դժվարություններն ու խնդիրները: Չէ՞ որ վերջին տասնամյակներին մի շարք երկրներում, այդ թվում և Հայաստանում, օտար լեզու կամ, ավելի ճիշտ, անգլերեն սկսում են ուսումնասիրել դպրոցական վաղ տարիքից, իսկ շատ հաճախ էլ՝ նախադպրոցական տարիքից, և որի ուսուցումը հետագայում շարունակվում է ինստիտուտներում և համալսարաններում (բակալավրիատ), իսկ շատ հաճախ էլ՝ մագիստրատուրայի դասընթացներում: Այլ խոսքով՝ տարիներ շարունակ օտար լեզու ուսանելու դեպքում էլ մարդ հնարավոր է չկարողանա լիարժեք տիրապետել լեզվին: Ակամայից սկսում ենք համեմատություն անցկացնել փոքրիկ երեխաների և չափահասների միջև. այդ ինչպես է, որ իրենց կյանքի երկրորդ տարում, իսկ երբեմն էլ մի փոքր ավելի վաղ տարիքում, երեխան սկսում է խոսել և արտահայտել իր մտքերը մայրենի լեզվով՝ առանց քերականական կամ այլ դասագրքեր ուսումնասիրելու, բավական վարժ, իսկ չափահաս տարիքի մարդիկ, երբ նպատակադրված և գիտակցաբար են ցանկանում սովորել լեզու, այդ թվում՝ օտար, լինի դպրոցում, համալսարանում կամ լեզվի կենտրոնում, այդ նույն արդյունքը չեն ունենում: Այստեղ շատերը կարող են ասել, որ երեխան մեծանում է մայրենի լեզվի միջավայրում,

որի դեպքում ոչ մի դասագիրք էլ պետք չէ: Սա և՛ այդպես է և՛ այդպես չէ: Չէ՞ որ ներկայումս տեխնիկական միջոցները և պայմանները մեզ հնարավորություն են տալիս ստեղծելու գոնե բնականին մոտ լեզվական միջավայր, ընտրելու լավագույն դասագրքեր, իսկ երբեմն էլ՝ լավագույն մասնագետի: Նշենք, որ պատճառն այստեղ հոգեբանական է. երեխաներն ավելի անմիջական են և երբեք չեն մտածում այն մասին, արդյոք ճիշտ են խոսում, թե՛ ոչ: Շատ հաճախ դպրոցականը կամ ուսանողը կարող է սերտել հարյուրավոր բառեր, բայց չկարողանա արտահայտվել տվյալ լեզվով: Օտար լեզու դասավանդողներից շատ հաճախ կարող ենք լսել այն միտքը, որ այս կամ այն սովորողն ունի բավական հարուստ բառապաշար, իսկ երբեմն էլ քերականական բավարար հիմք, սակայն՝ խոսակցական անբավարար ունակություն: Նշենք, որ, սովորաբար այն սովորողները, որոնք <<անվախ են>> և փորձում են դիմացինի հետ հաղորդակցվել անգամ քիչ բառապաշարի դեպքում, նույնիսկ արտասանական և քերականական սխալներ թույլ տալով, նրանք համեմատաբար ավելի արագ են հաղթահարում լեզվական դժվարությունները: Ուրեմն, շատ կարևոր է սովորողի համար հոգեբանական խոչընդոտները հաղթահարելը (<http://www.lingholic.com/learning-foreign-language-10-most-common-mistakes>): Քիչ չեն պատահում այն դեպքերը, երբ ուսուցչի կամ դասախոսի կողմից պատմել կամ վերարտադրել հանձնարարված նյութը աշակերտը կամ ուսանողը հրաժարվում է պատասխանելուց (անգամ դասը սովորած լինելու դեպքում)՝ պատճառաբանելով, որ այն չի սովորել: Ինչպես հետո է պարզվում, նա այդպես էր պատճառաբանել, որովհետև վախեցել էր սխալ արտահայտվելուց և քերականական կամ արտասանական սխալներ թույլ տալուց, քանի որ նախորդ աշակերտի կամ ուսանողի պատասխանը նա համարել էր առավել լավ և անթերի: Իսկ շատ հա-

ճախ էլ, սովորողի կարծիքով, միայն լեզուն անթերի իմանալու դեպքում նա իրեն կարող է թույլ տալ կիրառել այն գործնականում: Իհարկե, սա շատ սխալ մոտեցում է, քանի որ այդպես սպասելով «հարմար առիթի»՝ հոգեբանորեն այդ առիթը երբեք էլ չի կարող ներկայանալ: Նման հոգեբանական խնդիրներ ունեցող սովորողներին մասնագետը պետք է պարբերաբար քաջալերի, եթե նույնիսկ առաջադիմությունը չնչին է: Բացի այդ, որպեսզի դասավանդող մանկավարժը կամ մասնագետը նման ուսանողներին պահի ավելի ակտիվ վիճակում՝ պետք է մշակի լեզվամտածողությունը զարգացնող հատուկ վարժություններ կամ հանձնարարություններ, օրինակ՝ հանձնարարված բառերի և արտահայտությունների շուրջ կազմել փոքրիկ խոսակցական սիտուացիաներ: Շատ լավ կլինի, եթե մասնագետը առաջարկի սովորողներին հետաքրքրող թեմային վերաբերող բառեր ու արտահայտություններ՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունների և նախասիրությունների ոլորտը: Օրինակ՝ ասենք, տվյալ երկրի մշակույթին, արվեստին վերաբերող բառեր: Իհարկե, թեմայի ընտրությունը խիստ անհատական է: Նման հանձնարարության ժամանակ կարող են աշխատել զույգերով, անգամ օգտագործելով երկխոսություններ կամ նշված նյութը ներկայացնել փոքրիկ բեմականացմամբ: Սա քաջալերելու շատ արդյունավետ եղանակ է և այն անպայման կգործի:

Օտար լեզու սովորելու հետ կապված խնդիրներից է նաև տվյալ լեզվով մտածելու (նաև անգլերենով) անկարողությունը: Չէ՞ որ լեզուն, բացի հաղորդակցության միջոց հանդիսանալուց, ամենից առաջ մտածողություն է: Այսինքն՝ ինչ լեզվով մտածում ենք, այն լեզվով էլ խոսում: Մենք առավել լավ արդյունքների կհասնենք, եթե մեզ հաջողվի սովորողին ստիպել մտածել այն լեզվով, որը որ նա ուսումնասիրում է: Նկատենք, որ այս պարագայում շատ լավ միջոց է ան-

գլերենով կամ որևէ այլ օտար լեզվով արտասանական վարժություններ, գանազան տեքստեր ունկնդրելը, անգամ, եթե տվյալ նյութի մեջ առկա են մի շարք անծանոթ բառեր:

Խոսելով ոչ լեզվակիր երկրում օտար լեզու սովորողների բարոյահոգեբանական խնդիրների և նրանց հաղթահարման մասին, անհրաժեշտ է նշել նաև քերականական ժամանակաձևերին, կառուցվածքներին և առանձին երևույթներին այս կամ այն չափով տիրապետելու կարևորությունը: Սա, հատկապես այն սովորողների համար է անհրաժեշտ, որոնք, ինչպես արդեն ասացինք, վախենում են հաղորդակցվելիս սխալներ թույլ տալ: Ընդհանրապես քերականությունն ուսումնասիրելու համար գոյություն ունեն տարբեր եղանակներ: Դրանցից մեկը քերականական նյութի **կոնցենտրիկ համակարգված** սկզբունքն է (**FLSP-Foreign Language for Special Purposes, Yerevan, 2005, Yerevan State University, p. 135**), որն իր մեջ ներառում է երկու տարբերակ: Առաջին տարբերակի դեպքում առաջարկվում է քերականությունն ուսումնասիրել համեմատաբար երկար ժամանակահատվածում՝ սկսելով ամենապարզից և աստիճանաբար բարդացնելով: Երկրորդ տարբերակի դեպքում քերականական նյութն ուսումնասիրվում է ընտրված թեմային համապատասխան: Այսինքն, եթե տվյալ նյութի մեջ կան, օրինակ՝ **Passive Voice**-ով (կրավորական սեռով) արտահայտված նախադասություններ կամ կառուցվածքներ, ապա անպայման պետք է տվյալ թեմային զուգահեռ ուսումնասիրել նաև **Passive Voice**: Այս դեպքում սովորողը, ծանոթանալով տվյալ քերականական նյութին կամ կառուցվածքին, ավելի համարձակ է դառնում հաղորդակցվելիս: Շատ կարևոր է նաև մայրենի լեզվի քերականությանը տիրապետելու հանգամանքը: Օրինակ՝ հայերենի քերականական հարուստ ժամանակաձևերին, կառուցվածքներին, երևույթներին տիրապետելով՝ սովոր-

րողներն ավելի հեշտությամբ են ընկալում տվյալ օտար լեզվի քերականական ժամանակաձևերին, կառուցվածքներին, հատկապես, երբ գուգահեռներ են անցկացվում երկու լեզուների քերականական այս կամ այն երևույթի միջև (օրինակ, ասենք, հայերենի ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևերի և անգլերենի Present և Past Perfect ժամանակաձևերի միջև, երկու լեզուների մեջ առկա օժանդակ բայերի, հայերենի և անգլերենի բայերի սեռերի միջև և այլն:

Նշենք, որ հաճախ անգամ տվյալ օտար լեզվի քերականությունը բավարար իմանալու դեպքում սովորողները կարող են թույլ տալ լեզվաքերականական սխալներ: Այստեղ տեղին է ասել, որ երբեմն հայերենի և անգլերենի միջև համեմատություն անցկացնելը կարող է սովորողներին ապակողմնորոշել: Դրա համար մասնագետը նյութը բացատրելիս պետք է համեմատությանը մոտենալ վերապահորեն: Կան որոշակի սխալներ, որոնք շատ դեպքերում ընդհանուր են և, որոնց մենք առավել հաճախ ենք հանդիպում սովորողների մոտ: Դրանցից է, օրինակ՝ ժամանակաձևերի համաձայնությունն անգլերենում: Այս դեպքում հայերենի հետ համեմատությունը սովորողին կարող է երբեմն շփոթության մեջ գցել: Օրինակ, եթե անգլերենում բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր նախադասությունը դրված է անցյալ ժամանակաձևով, ապա երկրորդական նախադասության մեջ բացառվում է ներկայի որևէ ժամանակաձև (The Present Indefinite, the Present Perfect, the Present Continuous, the Future Indefinite, the Present Perfect Continuous etc.): Այս դեպքում հայերենի հետ համեմատությունը մեզ չի օգնի: Օրինակ, անգլ.

The student **said** that he **knew** two foreign languages.

Հայ.՝ Ուսանողն **ասաց**, որ նա **գիտի** երկու օտար լեզու:

Մեր անգլերեն օրինակի գլխավոր և երկրորդական նախադասությունների

ստորոգյալներն, ըստ սահմանված կարգի, օգտագործվել են անցյալ ժամանակում՝ արտահայտելու համար անցյալում միաժամանակյա գործողություն, սակայն այդ նույն նախադասության հայերեն տարբերակի երկրորդական նախադասության մեջ օգտագործել է ներկա ժամանակ՝ անցյալի իմաստով: Անընդունելի կամ ոչ այնքան ճիշտ կլինե՞ր հետևյալ նախադասությունը՝ Ուսանողն **ասաց**, որ նա **գիտեր** երկու օտար լեզու: Եթե մենք ճիշտ համարենք այս նախադասությունը, ապա կնշանակի, որ ուսանողը ինչ-որ մի ժամանակ իմացել է երկու օտար լեզու, որ, միգուցե, հիմա մոռացել է: Սա նշանակում է, որ օտար լեզու ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել տվյալ լեզվի քերականական առանձնահատկությունները, որովհետև հայերենի հետ համեմատելիս կարող է առաջանալ շփոթություն: Ուրեմն, եթե շատ դեպքերում մայրենի լեզվի, իսկ տվյալ դեպքում՝ հայերենի իմացությունն օգնում է անգլերեն լեզու ուսումնասիրելիս, ապա որոշ դեպքերում էլ համեմատություններ անցկացնելիս երկու լեզուների միջև, կարող են առաջանալ սխալներ:

Հաջորդ ամենատարածված սխալներից է, որ հանդիպում ենք անգլերեն (որպես օտար լեզու) սովորողների մոտ՝ կրկնակի ժխտում օգտագործելն է նախադասության մեջ: Եթե հայերեն լեզվով նախադասություններում կրկնակի ժխտումն ընդունելի է, ապա այդ նույնը չենք կարող ասել անգլերենի համար:

Օրինակ, հայ.՝ Ես այս գրքի մեջ **չեմ տեսնում ոչ մի** հետաքրքիր բան: Այստեղ առկա է երկու ժխտում: Այս նախադասության ճիշտ թարգմանությունն անգլերենով կլինի հետևյալ կերպ՝

Անգլ.՝ – I **don't see** anything interesting in this book (մեկ ժխտում) Միայն կլինի, եթե թարգմանենք՝ I **don't see nothing** interesting in this book (երկու ժխտում):

Շատ հաճախ սովորողները կարող են սխալվել անգլերեն **“to learn”** և **“to study”** և հայերեն՝ «սովորել» և «ուսումն

նասիրել» բայերի օգտագործման ժամանակ: Հայերենում մենք ասում ենք՝

Հայ.՝ Մարին **սովորում է** համալսարանում: Այս նույն նախադասությունն անգլերենում կթարգմանվի՝

Անգլ.՝ – Mary **studies** at the University: Մենք չենք կարող ասել՝ Mary **learns** at the University.

Սակայն կարող ենք ասել՝ անգլ.՝ Mary is learning her lesson now. (Մարին իր դասն է սովորում հիմա), իսկ, եթե հայերենում խոսքը գնում է մի ինչ-որ լեզու ուսումնասիրելու մասին, ապա մենք անգլերենով թարգմանում ենք՝

I **study** English (Ես ուսումնասիրում եմ անգլերեն):

Ի տարբերություն հայերենի՝ անգլերենում, այսպես կոչված, հոլովները շատ քիչ են: Հայերենին բնորոշ է հոլովների հարուստ համակարգ (յոթ հոլով): Անգլերենի գոյականները և անձնական դերանունները ունեն ընդամենը երկու հոլով. գոյականների համար՝ **Common Case** և **Possessive Case (ընդհանուր հոլով և ստացական հոլով)**, իսկ անձնական դերանունների համար էլ՝ **Nominative Case** և **Objective Case** անվանական հոլով և օբյեկտային հոլով): Նկատենք, որ անգլերենում մնացած հոլովների դերը կատարում են նախդիրները (Prepositions): Այստեղ նշենք, որ սովորողների մոտ ամենատարածված սխալների թվին են պատկանում նախդիրների ոչ ճիշտ օգտագործման դեպքերը: Նախդիրների սխալ օգտագործման ժամանակ բառի կամ նախադասության իմաստը կարող է փոխվել ամբողջովին: Երբեմն սովորողները հայերենից անգլերեն թարգմանելիս բառը կամ արտահայտությունը թարգմանում են բառացի՝ հիմնվելով հայերենի գիտելիքների վրա, անտեսելով անգլերենին բնորոշ առանձնահատկությունները: Օրինակ՝

Հայ.՝ –Նա հոգնել է շատ **կարդալուց** (բացառական հոլով): Մենք չենք կարող անգլերենում ասել՝ He is tired **from** reading թեև հայերենի **ից** կամ **ուց** վեր-

ջավորություններին համապատասխանում է անգլերենի **from** նախդիրը: Այս օրինակի ճիշտ թարգմանությունն է՝ He is **tired of** reading, իսկ հետևյալ օրինակում արդեն օգտագործվում է **from** նախդիրը.

Օրինակ՝ Look, the children are coming **from** the park – (Նայե՛ք, երեխաները գալիս են **այգուց**): Ընդհանրապես անգլերենում հարմար է բայերը կամ կառուցվածքները սովորել և մտապահել իրենց նախդիրներով, որովհետև գրեթե յուրաքանչյուր բային բնորոշ է այս կամ այն նախդիրը (**T. J. Fidikides: Common Mistakes in English, England, Pearson Education, 2000, p. 12**):

Ստորև ներկայացնում ենք որոշ բայեր իրենց նախդիրներով՝

To boast of smb. or smth. – հպարտանալ (մեկով կամ մի բանով)

To arrive at, in – ժամանել (որևէ տեղ)

To be afraid of – վախենալ (մի բանից կամ մեկից)

To be ashamed of – ամաչել (մի բանից)

To be interested in – հետաքրքրվել մի բանով

To be good at – լավ լինել մի ինչ-որ բանի մեջ

To consist of – բաղկացած լինել

To congratulate smb. on smth. – շնորհավորել մեկին (ինչ որ մի բանով) առիթով)

To depend on smth. – կախված լինել (մի բանից)

To be angry with, at – զայրանալ (մեկի կամ մի ինչ-որ բանի վրա)

To cure of – բուժել (ինչ-որ մի հիվանդությունից)

To deprive of – զրկել (մի բանից)

Շատ հաճախ սկսնակները բայերը սովորում են առանց իրենց հետ դրվող նախդիրների (preposition), և թարգմանելիս էլ բայն օգտագործում հայերենի հետ համեմատելով: Օրինակ, եթե մենք անգլերենի **to look** բայը սովորենք առանց իր **at** նախդիրի, ապա հայերենի ազդեցությամբ սովորողները կարող ենք թարգմանել՝ **look on**, այլ ոչ թե՛ **look at**:

Օրինակ՝ I am **looking on** the blackboard (սխալ) փոխանակ թարգմանելու՝ I am **looking at** the blackboard:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն հոդերն անգլերենում (a, an, the): Անգլերենում հոդերի ոչ ձիշտ կիրառումը ևս սովորողների կողմից թույլ տված ընդհանուր սխալների թվին է պատկանում: Ելնելով անգլերենում հոդերի ունեցած կարևոր դերից՝ մասնագետը դասավանդելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնի հոդերի թեմային՝ անկախ դասընթացի մակարդակից՝ սկսնակ, միջին, խորացված և այլն: Թեև գոյություն ունեն որոշ ընդհանրություններ հայերենում և անգլերենում՝ կապված հոդերի կիրառման հետ (օրինակ՝ անգլերենի **the** որոշյալ հոդի և հայերենի **ը** որոշյալ հոդի միջև), սակայն անգլերենում հոդերի կիրառումը խիստ յուրօրինակ է, մանավանդ, երբ խոսքը գնում է տեղանունների, ծովերի, գետերի, օվկիանոսների, լեռնաշղթաների, փողոցների, նշանավոր շենքերի, աշխարհամասերի, երկրների և այլնի մասին: Որպեսզի սովորողները գերծ մնան հոդերի կիրառման հետ կապված սխալներից, ապա պետք է հանգամանալից ուսումնասիրեն անգլերենի հոդերը (**Michael Vince with Paul Emmerson: Intermediate Language Practice with Key, Macmillan, 2003, p. 133-140, Michael Vince with Peter Sunderland: Advanced Language Practice with Key, Macmillan, 2003, p. 104-110**):

Հաջորդ հաճախակի հանդիպող ընդհանուր սխալներից է ածականների ոչ ձիշտ կիրառումը նախադասության մեջ, կամ ավելի ձիշտ կլինի ասել՝ նրանց ոչ ձիշտ տեղադրումը նախադասության մեջ: Այս սխալը կարող են թույլ տալ նույնիսկ բավական կայուն գիտելիք ունեցողները: Իսկ ինչպիսի՞ հերթականությամբ պետք է օգտագործվեն ածականները նախադասության մեջ (եթե նախադասության մեջ առկա են մեկից ավել ածականներ) ընդհանրապես ածականները նախադասության մեջ դա-

սավորվում են ըստ իրենց իմաստի (**John Eastwood: Oxford Practice Grammar, p. 247, - Oxford University Press**)՝

1. Opinion (how good) – wonderful, nice, great, awful, terrible etc.
2. Size (how big) – large, small, long, short, tall etc.
3. Most other qualities – quiet, famous, important, soft, wet, difficult, fast, warm etc.
4. Age (how old) – new, old etc.
5. Colour – red, blue, green, black etc.
6. Origin (where from) – American, British, French etc.
7. Material (made of) – stone, plastic, steel, wooden etc.
8. Type (what kind) – electric kettle, political matters, road transport etc.
9. Purpose (what for) – bread knife, a bath towel etc

Օրինակ՝ անգլ.՝ **A small green insect (size, colour);**

Japanese industrial designers (origin, type);

A wonderful new face cream (opinion, age, purpose)

Եթե նախադասության մեջ օգտագործվել է մեկ ածական, ապա նրա հիմնական տեղը գոյականից առաջ է: Օրինակ՝ **a famous** writer, **a beautiful** view.

Խոսելով ամենից հաճախ հանդիպող լեզվաբերականական սխալների մասին՝ հարկ ենք համարում նաև խոսել իդիոմատիկ արտահայտությունների (**Idiomatic phrases**) ընկալման և թարգմանության ժամանակ հանդիպող սխալների մասին: Նկատենք, որ անգլերեն ուսումնասիրողների համար առանձնակի դժվարություն են ներկայացնում, հատկապես, իդիոմատիկ արտահայտությունները, նույնիսկ լեզուն բավականաչափ լավ տիրապետելու դեպքում: Իդիոմատիկ արտահայտությունները սովորաբար բաղկացած են երկու կամ ավելի բառերից՝ արտահայտելով փոխաբերական իմաստ (**metaphorical meaning**): Ընդ որում, նրանց բառացի արտահայ-

տած իմաստը բավական հեռու է ընդհանուր իմաստից (**Longman Dictionary of English Idioms.- Longman Group Limited, 1979, UK, p. 2-13**): Սա նշանակում է, որ անգամ իդիոմատիկ արտահայտությունը կազմող բառերին ծանոթ լինելու հանգամանքը մեզ չի կարող օգնել:

Օրինակ՝ անգլ.՝ **Give up the ghost** իդիոմատիկ արտահայտությունը պետք է հասկանալ՝ «to die» («մահանալ»): Մեկ ուրիշ օրինակ՝ անգլ.՝ **Spill the beans** (զաղտնիքը հայտնել, բերանից խոսք թողնել, բառերը շաղ տալ) Ընդհանրապես փոխաբերական իմաստ արտահայտող իդիոմներն ավելի հեշտ են ընկալվում, երբ մենք ծանոթ ենք լինում տվյալ արտահայտության առաջացման հետ կապված պատմությանը (այսինքն՝ ինչ առիթով է տվյալ արտահայտությունն առաջին անգամ գործածվել): Շատ հաճախ իդիոմատիկ արտահայտությունները թարգմանվում են բառացի՝ արտահայտելով հուզական վիճակ, այս կամ այն խնդրի կապակցությամբ, արձագանք, վերաբերմունք և այլն: Օրինակ՝ անգլ.՝ **To hang one's head** արտահայտությունը հայերեն բառացի թարգմանվում է՝ **գլուխը կախել** (ամոթից, շփոթմունքից և այլն) կամ անգլ.՝ **To throw up ones hands/arms** հայերեն թարգմանվում է՝ **ձեռքերը թափ տալ** (զարմանքից, շփոթմունքից և այլն) անգլ.՝ **To fall off the chair** – հայ.՝ **աթոռից ընկնել** (օրինակ՝ խիստ զարմանքի դեպքում և այլն) երբեմն իդիոմատիկ արտահայտությունը կարող է բաղկացած լինել երկու գոյականից՝ միացված **and** և **or** շաղկապող բառերով: Օրինակ՝ անգլ.՝ **Cats and dogs (It is raining cats and dogs – ուժեղ անձրև է գալիս)**:

Ինչպիսի՞ խորհուրդ կարելի է տալ սովորողներին՝ իդիոմատիկ արտահայտությունները սխալ ընկալումից խուսափելու համար: Միանգամից ասենք, որ գոյություն ունեն համապատասխան բառարաններ, ուղեցույցներ, որոնք հաստատ կօգնեն անգլերեն լեզուն սովորողներին:

Օրինակ՝

“**Longman Dictionary of English Idioms.-Longman Group Limited, 1979, UK, 387 pp.**”;

А. В. Кунин: Англо-русский фразеологический словарь, Москва, 1984, 942 стр.

Անգլերեն ուսումնասիրողների մոտ մենք կարող ենք հանդիպել նաև մի շարք այլ սխալներ էլ, սակայն դրանք հաճախ անհատական բնույթ են կրում՝ կապված տարբեր հանգամանքների հետ (օրինակ, անուշադրություն, շտապողականություն, անփութություն և այլն): Ինչ խոսք, մեր շոշափած թեման բավական ընդգրկուն է և սույն հոդվածով անհնար է այդ ամենի մասին խոսել: Մեկ բան ակնհայտ է. եթե կա հոգեբանական արգելք կամ խնդիր, անվստահություն սեփական ուժերի և, ինչու չէ, մասնագետի նկատմամբ, ապա անհնար է խորանալ լեզուն ուսումնասիրելու մեջ և մեր ջանքերն էլ կլինեն գրեթե ապարդյուն: Ուրեմն, դասավանդող մասնագետի համար առաջնային խնդիրը պետք է լինի դասարանում կամ լսարանում ստեղծել բարոյա-հոգեբանական նպաստավոր մթնոլորտ, ձեռք բերել սովորողների վստահությունը և հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ: Միայն փոխադարձ վստահության և փոխըմբռնման պայմաններում կարելի է հասնել ցանկացած արդյունքի: Իսկ ինչ վերաբերում է լեզվա-քերականական սխալներին, ապա դրանք հաղթահարելի են, եթե առկա են ճիշտ մշակված թեմաներ, որոնք ուղեկցվում են համապատասխան լեզվական և քերականական վարժություններով: Միայն համառ, քրտնաջան և հետևողական աշխտանքի դեպքում մենք կարող ենք հասնել դրական արդյունքի:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝
13.01.2015

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. FLSP: Foreign Language for Special Purposes, –Yerevan State University, 2002, 177 pp.
2. T. J. Fitikides: Common Mistakes in English, 2000, England (Printed in Malaysia) 200 pp.
3. Longman Dictionary of English, 1979, UK, 387 pp.
4. Michael Vince with Paul Emmerson: Intermediate Language Practice, Macmillan Education, 2003, Oxford, 296 pp.
5. Michael Vince with Peter Sunderland: Advanced Language Practice, Macmillan Education, 2003, 326 pp.
6. <http://www.lingholic.com/learning-foreign-language-10-most-common-mistakes>
7. John Eastwood: Oxford Practice Grammar, p. 247, – Oxford University Press

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ТРУДНОСТИ И ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ: НАИБОЛЕЕ ЧАСТО ВСТРЕЧАЮЩИЕСЯ ЛИНГВО-ГРАММАТИЧЕСКИЕ ОШИБКИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

АСМИК АБРААМЯН

*Национальная Академия Наук РА, Международный научно-образовательный центр,
преподаватель английского языка*

В данной статье обсуждаются те психологические проблемы, которые мешают учащимся общаться на английском. Рекомендуются способы преодоления данных психологических и языковых барьеров и проблем. На конкретных примерах раскрываются некоторые общие лингво-грамматические ошибки, с которыми учащиеся сталкиваются наиболее часто. Особое внимание уделяется развитию языкового мышления.

Дата представления статьи: 13.01.2015

PSYCHOLOGICAL DIFFICULTIES AND THE PROBLEMS OF LEARNING A FOREIGN LANGUAGE: THE MOST COMMON LINGUISTIC GRAMMATICAL ERRORS AND WAYS TO OVERCOME IN ENGLISH

HASMIK ABRAHAMYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences
of the Republic of Armenia, Lecturer of English*

The given article discusses the psychological problems that prevent students to communicate in English. Ways are recommended to overcome these psychological and language barriers and problems. Some common linguistic and grammatical errors are revealed on specific examples that students encounter most often. Particular attention is paid to the development of linguistic thinking.

Article submission date: 13.01.2015